ՀԱՅ-ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(XVIII դարի վերջ)

Պ. Ա. ՁՈՐԱՆՅԱՆ

Հայ ժողովրդի XV—XVII դդ. ազատագրական պայքարի ընթացքում հայ քաղաքական գործիչները համոզվել էին, որ օտար լծից Հայաստանի ազատագրման գործի կազմակերպումը կապված էր բազմաթիվ դժվարությունների ու խոչընդոտների հաղթահարման հետ, որին և ձեռնամուխ էր լինում յուրաքանչյուր նոր սերունդ, եթե նպաստավոր որևէ հանգամանք սկսում էր որոշակի հույս ներշնչել։ Իր հայրենիքին ու մշակույթին կառչած ժողովրդի առաջնորդները, սակայն, հույսեր էին փայփայում, որ այն. ինչ սեփական ուժերով անհնար է իրականացնել ուժերի անհավասարության պայմաններում, ապա հնարավոր կարելի է դարձնել ճկուն քաղաքականությամբ՝ օգտագործելով արտաքին ու ներքին նպաստավոր հանգամանքները, այն է. համագործակցելով թուրք-պարսկական բռնակալությունների դեմ հանդես եկող պետությունների հետ։ Այդ նպատակով հայկական բազմաթիվ դեսպանագնացություններ են եղել ժամանակի քաղաքակիրթ աշխարհի բոլոր այն պետություններ ու երկրներ, որոնց շահերը այս կամ այն չափով հակադրվում էին պարսկական կամ թուրքական պետությունների շահերին[1]։ Եթե մինչև XVII դարի երկրորդ կեսը Մեծավոր Արևելքի առևտրով ու նրա ստրատեգիական դիրքով շահագրգռված էին հիմնականում եվրոպական խոշոր տերությունները (Ֆրանսիա, Անգլիա, Իսպանիա, Պորտուգալիա, Իտալիա, Լեհաստան և այլն), ապա XVII դարի վերջերից Ռուսաստանի նվաճողական մղումները քաղաքական հույսերի նոր հորիզոններ բացեցին հայ գործիչների առջև և նրանք ձեռնամուխ եղան օգտագործելու ստեղծվելիք նոր հնարավորությունները։ Այդ հույսերը չարդարացան XVIII դարի առաջին երեսնամյակին, հայ ժողովրդի ազատագրական զինված պայքարը պարտություն կրեց։ Անհաջողությունը, սակայն, չէր բացառում նման հնարավորության հավանականությունը և հայ գործիչները XVIII դարի երկրորդ կեսին ևս շարունակում էին Հայաստանի ազատագրման ծրագրերում կարևոր տեղ հատկացնել Թուրքիայի ու Պարսկաստանի թուլացման գործում այլ պետությունների, և մասնավորապես Ռուսաստանի ռազմական միջամտության հանգամանքին, հասկանալով, թե որքան վտանգավոր է առանց լուրջ նախապատրաստական աշխատանքի ու առանց դաշնակիցների, միայն իրենց ունեցած փոքրաքանակ ուժերով մարտահրավեր նետել այն պետություններին, որոնց կազմի մեջ և տիրապետության տակ էր գտնվում Հայաստանը այդ ժամանակ։

Պատասխանելով Շահամիր Շահամիրյանի Հնդկաստանից գրած նամակներին, որտեղ հորդորվում էր ազատության հասնել ապստամբության

---

1 Այդ մասին հանգամանորեն տե՛ս Ա. Գ. Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. հ. 2, Երևան, 1959։ Հ. Անասյան. XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում. Երևան, 1961։ Մ. Ջուլալյան. Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ. Երևան, 1980, էջ 337—390։ Т. Г. Тивадзе. Об использовании армянских купцов на дипломатической службе грузинскими царями.—«Այսրկովկասի պատմության պրոբլեմները» (վրաց.). Թբիլիսի, 1991, էջ 238—245։

միջոցով և մեղադրանք կար օտարի լուծը տանելու համար, Ղուկաս կաթողիկոսը 1789 թ. գրում է. «Բայց լինէր թէ դու՝ օրհնեալդ, այժմ յայս կողմանքս գայիր և ականատես վերահասութեամբ իմանայիր զկացութիւնս մեռազնէից և զանօգնականութիւն և զբռնութիւն իշխողացն և ինքնին կնքէիր, թէ այս դիտմանցս յառաջանալ ոչ լինի։ Ապա թէ հնարավոր իցէր յառաջանալն մի՞թե յիմար իցեմք, որ ի տառապանաց զերծանիլ չկամիցիմք»։ Ղուկաս կաթողիկոսը պատկերավոր լինելու համար շեշտում է. «Զկունք որսացեալ ի ցանցս, և թռչունք ըմբռնեալք ի վարմս, ջտնան զերծանիլ, ապա ո՞րքան ևս առաւել բանականքս բաղձամբ ազատութեան, սակայն զի և վտանգաւոր յոյժ, վասն որոյ երկուց չարեաց զփոքրն ընտրել պիտոյ է»։ Միաժամանակ նշում է, թե ինքը ի՞նչ վտանգներ նկատի ունի և ինչի՞ց է զգուշանում. «Առ այս խնդրեմ ի միտ ածել զԵրուսաղէմացիս և զայլ հրէայս ապստամբս ի հռովմայեցւոց, թէ զի՞նչ կրեցին, որք ոչ զօրաւորք էին»[2]։

Ինչպես Ղուկաս կաթողիկոսը, այնպես էլ մյուս եկեղեցաքաղաքական առաջնորդները չէին դադարում ուղիներ որոնել ազատության գործի հաջողությունը ապահովելու համար։ Այդ աշխատանքը տարվում էր եղած հնարավորությունների առավել օգտագործման և ազգի պահպանման ուղղությամբ՝ եկեղեցական ու աշխարհիկ իրադրությունը կայուն և միասնական պահելու, դավանական պառակտումներ թույլ չտալու և քաղաքական ու միջազգային բարենպաստ հնարավորություններին հետևելու և այդպիսիք ստեղծելու ջանքեր գործադրելու միջոցով։ Այդ նպատակով բանակցություններ էին վարվում բոլոր շրջակա պետությունների ու քաղաքական կազմավորումների, այդ թվում նաև Ռուսաստանի հետ։ Առանձնակի ուշադրություն էր դարձվում ուժերի ներածին չափ հայկական բնակավայրերի ավերածություններ թույլ չտալու գործին։ Հայ քաղաքական միտքը XVIII դարի վերջին տասնամյակներին փորձում էր Հայաստանի ազատագրության համար օգտագործել նաև պարսկական տերության մեջ եղած հակամարտությունները և հենվել այն ուժերի վրա, որոնց համար կարող էր բարենպաստ լինել Ռուսաստանի ու այսրկովկասյան, այդ թվում նաև հայ ժողովրդի օժանդակությունը ստանալու գաղափարը։ Այդ առումով մեծ գործ էին կատարում հայ քաղաքական գործիչները և մասնավորապես նաև Էջմիածնի նվիրակ և ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանը, փորձելով բարեկամական կապեր հաստատել Իրանի դահի համար պայքարում իր հերթին Ռուսաստանի օժանդակության կարիքն զգացող ոչ միայն Ալի Մուրադ խանի[3], այլև Աղա Մահմադ խանի եղբայր Մուրթուզա Կուլի խանի հետ[4]։ Վերջինիս հետ մոտ մեկ տասնամյակ հայ գործիչների մտերմությունը թելադրված էր ինչպես Իրանի գահի համար նրա թեկնածությունը Ռուսաստանի կողմից պաշտպանվելու խնդրով, այնպես էլ ռուսական արքունիքում բարենպաստ կարծիք ստեղծելու մեջ հայ գործիչների միջնորդությանը դիմելու նրա մտահոգությամբ։

Հասկանալու համար այդ ընտրության հնարավորության և հիմնավորվածության աստիճանը, փորձենք հանգամանորեն ներկայացնել XVIII դա-

---

2 Ս. Վ. Տեր-Ավետիսյան. Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար.—Երևանի պետ. համալսարանի գիտական աշխատություններ, հ. XIII, Երևան, 1940, էջ 68։

3 А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия. Ереван, 1990, с. 130—144.

4 Մուրթուզա Կուլի խանի և հայ գործիչների կապերի գոյությունը ժամանակին նկատել է Վ. Դիլոյանը և հրատարակել Հովհաննես Լազարյանին նրա գրած փոքրիկ նամակի տեքստը (Վ. Դիլոյան. Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դարի երկրորդ կես). Երևան, 1966, էջ 178—179)։

րի վերջերի Իրանի քաղաքական կացության ու ներֆեոդալական պայքարի կարևորագույն դրվագները։

Դեռևս 1760-ական թթ. սկզբներին, Քերիմ խանի իշխանության ժամանակ, գերագահություն ստանալու նպատակով ներֆեոդալական երկպառակություններ սկսվեցին Մազանդարանում գտնվող դաշարական Դավալու և Կոյունլու տոհմերի միջև։ Պայքարը թուլացնելու նպատակով Քերիմ խանը Կոյունլու տոհմը տեղահանեց և բնակեցրեց Դամղանի մոտ, իսկ առաջնորդներին որպես պատանդ պահեց իր արքունիքում։ Տեղահանությունը հանձնարարվել էր Աղա Մահմադ խանին, որն իր հետ վերցրեց եղբայրներից նրանց, որոնք մայրական գծով չէին պատկանում Դավալու տոհմին։ Մազանդարանում մնացին նրա եղբայրներ Մուրթուզա Կուլի խանը և Մուստաֆա Կուլի խանը։

1779 թ. մարտի 2-ին Շիրազում մահանում է Քերիմ խանը։ Նույն օրն իսկ Աղա Մահմադ խանը, որը ևս որպես պատանդ պահվում էր Շիրազում, Քերիմ խանի պալատականների աջակցությամբ փախչում է Շիրազից։ Մեկ շաբաթ անց նա արդեն բավական կողմնակիցներ ու ռազմական ջոկատ էր հավաքագրել։ Եղբայրների հետ հակասությունը չխորացնելու նպատակով Աղա Մահմադ խանը 1780 թ. գրավելով Մազանդարանը և Աստարաբադը, իսկ 1781 թ. գարնանը՝ Գիլանը, Հեդաեթ խանի փոխարեն Գիլանի կառավարիչ է նշանակում Մուրթուզա Կուլի խանին։ Սակայն շուտով ապստամբություն է ծագում վերջինիս դեմ և սա ստիպված է լինում փախչելով փրկվել նախ Լահիճում և ապա Մազանդարանում։ Աղա Մահմադ խանը զբաղված լինելով Ալի Մուրադ խանի կողմից ուղարկված զորքերի հետ պատերազմելով, չէր կարող օգնել Մուրթուզա Կուլի խանին։

Դեռևս Գիլանում եղած ժամանակ Մուրթուզա Կուլի խանը Ռուսաստանի հետ նամակագրություն էր սկսել։ Ռուսաստանի նկատմամբ դրականորեն էր տրամադրված նաև Աղա Մահմադ խանը, որը թույլատրել էր Վոյնովիչը էքսպեդիցիային 1781 թ. Աստարաբադի մոտ կառուցել առևտրական ֆակտորիա։ Այն կառուցվեց բավական անառիկ և այնտեղ կարող էին պատսպարվել մոտ 1000 մարդ։ Այդ կասկածելի է թվում Աղա Մահմադ խանին։ Նրա հրամանով Վոյնովիչը ձերբակալվում է ու ետ ուղարկվում 1782 թ., իսկ ֆակտորիան ավերվում է։ Աղա Մահմադ խանի և Ռուսաստանի հարաբերությունները դառնում են թշնամական։ Ռուսաստանը սկսում է հարաբերություններ հաստատել Ալի Մուրադ խան Զենդի հետ։

Ալի Մուրադ խանը գիտեր Աղա Մահմադ խանի նկատմամբ Ռուսաստանի վերաբերմունքի մասին և աշխատում է օգտվել այդ հանգամանքից։ 1784 թ. ապրիլին նա կովկասյան գիծ է առաքում իր ներկայացուցիչ Մուհամմեդ խանին[5]։ Ռուսաստանի համար գայթակղիչ էր այն, որ Ալի Մուրադ խանը Ռուսաստանի պաշտպանությունը և օժանդակությունը ստանալու համար պատրաստ էր հրաժարվելու Ղարադաղը, Ղարաբաղը, Նախիջևանը և Երևանի նահանգը նվաճելու մտքից[6]։ Դեռևս 1782 թ. Ալի Մուրադ խանը իր զորքերի ռազմունակությունը բարձրացնելու նպատակով Հովսեփ Էմինին առաջարկում էր վարժեցնել զորքի մի մասը[7]։

Միաժամանակ համառ պայքար էր ընթանում Ալի Մուրադ խանի և Աղա Մահմադ խանի միջև հենց հյուսիսային Իրանում, որը 1784 թ. արդեն գրեթե գտնվում էր Ալի Մուրադ խանի զորքերի հսկողության տակ։ Աղա Մահմադ խանը պատսպարվել էր Աստարաբադում, որը գրավելու նպատակով զենդերը մեծ ուժեր էին կենտրոնացրել։ Նրանց դեմ Աղա Մահ-

---

[5] Н. Дубровин. История войн и владычества русских на Кавказе. Т. II, СПб., 1886, с. 165—169. 1784 թ. հունվարին Պավել Պոտյոմկինի նամակով Իսպահան էր եկել նաև Թոքատլովը և մեծ պատվով ընդունելություն գտել զենդերի պալատում։

[6] П. Бутков. Материалы для новой истории Кавказа. Ч. II, СПб., 1869, с. 148.

[7] Տե՛ս А. Р. Иоаннисян. Иосиф Эмин. Ереван, 1990, с. 247.

մադ խանը զորք է ուղարկում Մուրթուզա Կուլի խանի գլխավորությամբ։ Վերջինս, սակայն, գերադասում է դաշինքի գնալ զենդերի հետ՝ ստանալու համար մերձկասպյան ծովափի տիրապետությունը։ Աղա Մահմադ խանին, այնուամենայնիվ, հաջողվում է ջախջախիչ հարված հասցնել Աստարաբաղը գրավելու համար զենդերի ուղարկած զորքերին, որից հետո նա մեծ ակտիվությամբ շարունակում է զարգացնել իր հաջողությունները։ 1785 թ. սկզբներին մահանում է Ալի Մուրադ խանը և զենդերի բանակում հակասությունները ավելի են սրվում։

Զենդերի կողմն անցած Մուրթուզա Կուլի խանը անցնում է թալիշների մոտ և փորձում Ռուսաստանից օգնություն ստանալու համար հավաստիացնել, թե իբր իր և Աղա Մահմադ խանի միջև թշնամանքը հետևանք է այն բանի, որ ինքը, հովանավորել է Վոյնովիչի էքսպեդիցիային և այլն։

1786 թ. Աղա Մահմադ խանը, որ փաստորեն տիրում էր մերձկասպյան շրջաններին, փորձում է հարթել հարաբերությունները Ռուսաստանի հետ։ Ռուսաստանը ևս դեմ չէր Աղա Մահմադ խանի հետ հարաբերությունները բարելավելուն, քանզի հստակ էր արդեն, որ իշխանությունը կարող է մընալ դաջարներին։ 1786 թ. դեկտեմբերի 25-ին իշխան Գրիգորի Պոտյոմկինը պատասխան նամակ է ուղարկում նրան Լամբրո Կաչոնիի միջոցով։ Նամակում գոհունակություն էր հայտնվում բարիդրացիական հարաբերություններ հաստատելու նրա ցանկության առթիվ և ընդգծվում առևտրական հարաբերությունների բարելավման խնդիրը։ Լամբրո Կաչոնին 1787 թ. հունիսին Աղա Մահմադ խանի պատասխան նամակով վերադառնում է Ռուսաստան։ Աղա Մահմադ խանը Ռուսաստան է ուղարկում Միրզա Մոհամեդ Ալուն և վստահեցնում, որ իր կողմից կհարգվեն ռուս-իրանական կնքված բոլոր նախորդ պայմանագրերը և ինքը ամենայն կերպ կաջակցի ռուս-իրանական առևտրին։ Այսպիսով, երկու կողմն էլ շահագրգռված էին բարիդրացիական հարաբերությունների պահպանմամբ։ Սակայն Իրանում դեռևս չէր հանդարտվում գահի համար զենդերի և դաջարների միջև պայքարը։ Դրությունը սրում էր նաև Մուրթուզա կուլի խանը, որը ապավինել էր թալիշներին։ Նրան օժանդակում էին Թալիշի Մուստաֆա խանը, Դերբենդի և Ղուբայի Ֆաթ-Ալի խանը և Բաքվի Շեյխ Ալի խանը, որոնց օգնությամբ Մուրթուզա Կուլի խանը հավաքագրում է 7 հազարանոց բանակ, 1787 թ. սեպտեմբերին ճանապարհվում Գիլան և գրավում այն։ Մուրթուզա Կուլի խանին օժանդակում է նաև Կասպից ծովի ռուսական նավատորմի հրամանատար Պ. Շիշկինը։ Ի դեմս Մուրթուզա Կուլի խանի Ռուսաստանը տեսնում էր մի ուժ, որն անհրաժեշտ պահին կարելի էր հակադրել Աղա Մահմադ խանին։

Մուրթուզա Կուլի խանը երկիցս պարտության է մատնում իր դեմ ուղարկված Աղա Մահմադ խանի զորքերին։ Այդ ժամանակ Մուրթուզա Կուլի խանին թողնում և թալիշ է վերադառնում Թալիշի Մուստաֆա խանը։ Աղա Մահմադ խանը երրորդ անգամ զորք է ուղարկում Գիլան և գրավում այն։ Մուրթուզան տեղափոխվում է Էնզելի և ապա Շամախի՝ այնտեղից հակահարձակման համար զորք հավաքագրելու։

Մուրթուզա Կուլի խանի ճակատագիրը արդեն լիովին կախված էր Ռուսաստանից։ Այդ ժամանակ (1788 թ.) Ռուսաստանում էր գտնվում նաև Աղա Մահմադ խանի դեսպան Միրզա Մոհամեդ Ալին, որը մնաց մինչև 1792 թ.։ Ռուսաստանը ցանկանում էր Աղա Մահմադ խանի հետ դրական հարաբերություններ պահպանել, քանի ընթանում էր ռուս-թուրքական պատերազմը և նրա վիճակը Իրանում հաստատուն չէր։ Դրա փոխարեն Մուրթուզա Կուլի խանը, որ իրեն հորջորջում էր Գիլանի, Մազանդարանի և Աստարաբադի օրինական տեր, բազմաթիվ նամակներ էր հղում Ռուսաստան, խնդրելով մտնել Ռուսաստանի հովանավորության տակ «իր» նահանգներով։ Պարտավորվում էր տարեկան վճարել 10 000 ռուբլի Էնզելիի ռուսական կայազորի պահպանման համար, իսկ ռուսական վաճառականներին խոստանում էր

հարկերի ու մաքսերի լրիվ վերացում։ Փոխարենը Մուրթուզան իր դեսպանի միջոցով խնդրում էր երկու ֆրեգատ և 300 զինվոր, որոնք իրեն կաջակցեն իշխանության համար պայքարում[8]։

Ռուսական արքունիքը խուսանավում էր և որոշակի չէր պատասխանում ո՛չ Աղա Մահմադ խանին և ո՛չ Մուրթուզա Կուլի խանին, քանզի պարզ չէր, թե ո՞ւմ կանցնի իշխանությունը Իրանում։ Հստակ էր, սակայն, որ ռուսները ավելի հակված էին Մուրթուզա Կուլի խանին օգնելու։ Օրինակ, դեռևս 1787 թ. օգոստ. 19-ի նամակում Գրիգորի Պոտյոմկինը Պավել Պոտյոմկինին գրում էր, որ պետք է աջակցել Մուրթուզային, քանզի նա ավելի է հակված դեպի Ռուսաստանը և առաջարկում էր Դերբենտ ուղարկել երկու ֆրեգատ, անհրաժեշտության դեպքում Մուրթուզային օգնելու համար։ 1790 թ. Մուրթուզա Կուլի խանը կրկին գրավեց Գիլանը։ Կասպյան նավատորմին հրամայված էր օժանդակել նրան, սակայն բացահայտորեն չխառնվել այլ խանների հետ նրա պատերազմներին։ Մուրթուզա Կուլի խանը պարտության մատնեց և գերեց Աղա Մահմադ խանի կողմից իր դեմ ուղարկված Աբաս իսանին և Ռիզա խանին (որոնք Աղա Մահմադ խանի առավել սիրված գործիչներից էին)՝ ի հակակշիռ Աղա Մահմադ խանի կողմից գերված և պատանդ պահվող իր ընտանիքի[9]։ Աղա Մահմադ խանը ստիպված երկրորդ բանակը ուղարկեց Գիլան Մուստաֆա խան Դավալուի գլխավորությամբ, որը 1791 թ. մարտին գրավեց Գիլանը։ Մուրթուզա Կուլի խանը կրկին տեղափոխվեց Թալիշ։ Այդ միջոցին (1791 թ.) լուր է ստացվում, որ զենդերը նորից շարժվում են դեպի Իրանի կենտրոնական շրջանները[10]։ Աղա Մահմադ խանը թողնում է Իրանի հյուսիսային մասերը և շտապում Լուտֆ Ալի խան Զենդի դեմ։ Աղա Մահմադ խանի ուղարկած զորքի հետ առաջին ճակատամարտը շահում են զենդերը և փորձում շարունակել հարձակումը։ Այդ ժամանակ զենդերի բանակից Աղա Մահմադ խանի կողմն է անցնում Աբդուլ Ռահիմ խանը, որը Լուտֆ Ալի խանի առավել նշանավոր զորահրամանատարներից էր։ Ղաջարների զորքը մտնում է Շիրազ, որի անկումով ավարտվում է զենդերի տիրապետությունը Իրանում։

1794 թ. աշնանը Իրանը փաստորեն արդեն միավորված էր Աղա Մահմադ խանի սրի ներքո։

Ոչ միայն հայ քաղաքական-հասարակական գործիչներն էին հետևում Իրանում տեղի ունեցող իրադարձություններին և փորձում կապեր հաստատել Իրանի հակամարտ ուժերի առաջնորդների հետ, այլև այդ ուժերի պարագլուխները ևս փորձում էին ռուս-պարսկական հարաբերությունները բարելավելու համար օգտագործել հայ և վրաց գործիչների միջնորդությունները[11]։

---

8 АВПР, ф. 100. д. 486, л. 28, 68—69, 70—74 и сл. Մուրթուզա Կուլի խանը իր դեսպան Մոհամեդ բեգին Աստրախան էր ուղարկել դեռևս 1785 թ., որը, սակայն, անպատասխան վերադարձավ Մուրթուզայի մոտ։ Երկրորդ անգամ նա Աստրախան եկավ 1788 թ. Մուրթուզայի մի քանի նամակներով և կրկին անպատասխան մնաց։ Վերջապես երրորդ անգամ Մոհամեդ բեգը Աստրախան եկավ 1791 թ.։

9 П. Дубровин. Поход графа В. А. Зубова в Персию в 1796 году.— Военный сборник, 1874, № 2, с. 188.

10 Մուրթուզա Կուլի խանը դեռևս հույս ուներ կրկին վերադառնալ Գիլան և այդ մասին նամակով Հովսեփ Արղությանի միջոցով հայտնել էր Գ. Ա. Պոտյոմկինին։ Արղությանի հետ հանդիպման ժամանակ Պոտյոմկինը «էհարց Մուրթուզալի խանի որպէսն, նորա գիրն առ մեզ պարսերէն. ռուսերէն թարգմանել իւրն եւոու ասաց. կարդացից և կատարումն արարից։ ...Մուրթուզալի զուլի խանի վերայ ևս ուրախ եղէ, որ գնալոց է ի Գիլան և Աղայ Մահմատ խանի զորութեան պակասելն սորա խնդութիւն է» (ՄՄ, ձեռ., № 2949, էջ 232 բ)։

11 1786 թ. Աղա Մահմադ խանը լավ ընդունելություն է կազմակերպում վրաց իշխան Զաքարիա Ցիցիանովին Իսպահանի մոտ գտնվող Սանդրարանում և պատվով ետ ուղարկում։ Նա առաքված էր Հերակլ II-ի կողմից, որն արդեն կնքել էր 1783 թ. ռուս-վրա-

Այսպես, 1791 թ. Մուրթուզա Կուլի խանը Ռուսաստան առաքված Մոհամեդ բեգ դեսպանի միջոցով խնդրել էր Ռուսաստանից փոխել Ռուսաստանի հյուպատոս Շիշկինին, որը ոչ միայն չէր օժանդակում, այլև որոշակի սպառնալիք էր ստեղծել իր համար։

Շիշկինի դեմ էին տրամադրված նաև ռուս-իրանական առևտրում զբաղված հայ վաճառականները և հատկապես Աստրախանի հայերը։ Այդ մասին վկայում են նաև Հովսեփ Արղությանի Մկրտում Գալստյանին ուղղված 1791 թ. հունիսի 20-ի նամակի հետևյալ տողերը. «Մայիսի 25-էն գիրդ ընկալեալ ... գիտացի և չբոս նաի քոյ արգելմունքն և փրքաշիկի դրկելն ի Հաշտարխան և այլն։ Այսօր ... ես գիր գրեցի քնեազին (իմա Գ. Պոտյոմկինին—Պ. Ջ.) վասն քոյ ամենայն զրկանացն և ես ինքնին գնացի և մատուցի և բերանով պատմեցի. ծիծաղեցաւ և ասաց. «Կակօյի չօրթ Շիշկին, սկօրայ նէ բուդէթ օն տամ»։ Ինչևիցէ, խօստացաւ զնա հանել և կողմանցդ բանիցն կատարումն տալ»[12]։

Հավանաբար ոչ միայն Մուրթուզա Կուլի խանի, այլև ռուսական իշխանությունների և Աղա Մահմադ խանի հիվանդության ու Լուտֆ Ալի խանի հաջողությունների մասին Իրանից ստացված չափազանցված լուրերն էին հիմք տվել Արղությանին կարծելու, թե մոտ է Աղա Մահմադ խանի փոխարեն հայերի նկատմամբ բարեկամաբար տրամադրված Մուրթուզա Կուլի խանի տիրապետության հաստատումը։ Այդ լուրը, որ նա հաղորդել էր հնդկահայոց, ոգևորել էր նաև Հովսեփ Էմինին։ Վերջինս Արղությանին 1792 թ. հունվարի 4-ին գրած նամակում նշում է. «Այլև մխիթարութիւն իմն տաս մեզ ... յաղագս ծանօթ լինելոյն ձեր ընդ իշխանին Կիլանայ՝ ասելով, եթէ նա պայազատեսցէ ի տեղի եղբօր իւրում Աղա Մահմադ խան Ղաջար բռնաւորին ի Սպահան, այցելութիւն ինչ առնելոց է անդ բնակեալ հայոց ազգին»[13]։

Մուրթուզա Կուլի խանի դեսպանը, որ ժամանել էր Աստրախան, այդ պահանջը հայտնել էր նաև Հովսեփ Արղությանին։ Արղությանի 1791 թ. հունիսի 20-ի նամակից[14] պարզվում է, որ ինքը նամակ էր ստացել նաև Մուրթուզա Կուլի խանից[15]։

Այդ նամակները թարգմանելով, իր բացատրագրի հետ միասին Արղությանը հանձնում է Գ. Ա. Պոտյոմկինին, որը խոստանում է կատարել Մուրթուզա Կուլի խանի համար նրա բոլոր միջնորդությունները[16] ու նաև նոր հյուպատոս ուղարկել Գիլան։ Ուշագրավ է, որ արդեն իսկ մեկ ամիս անց՝ 1791 թ. հուլիսի 18-ին Մկրտում Գալստյանին գրած նամակում Արղությանը հայտնում է, որ «Շիշկինն փոխեցաւ չարաչար և ի տեղի նորին

դական Գեորգիևյան դաշնագիրը և որին խնդրում էր միջնորդել ռուս-պարսկական հարաբերությունները բարելավելու համար, խոստանալով նրան հանձնել հարևան խանությունների կառավարումը, ինչպիսի հիմունքներով նա տիրում էր Երևանին։

12 ՄՄ, ձեռ. № 2949, էջ 232 բ։

13 Վ. Ռ. Գրիգորյան. Հովսեփ Էմինի և Հովսեփ Արղությանի անտիպ նամակները (1791—1792 թթ.).—ՊԲՀ, 1990, № 4, էջ 194։

14 ՄՄ, ձեռ. № 2949, էջ 233 բ։

15 Նամակի բնագիրն ու ռուսերեն թարգմանությունը տե՛ս АВПР, ф. 100, д. 464, л. 163, 172։

16 Արղությանի և ասարախանարնակ Մկրտում Գալստյանի նամակագրությունից պարզվում է, որ ինչպես Մուրթուզա Կուլի խանի, այնպես էլ նրա դեսպանի դրագրությունները ռուսական արքունիքի հետ կատարվում էին հայ գործիչների միջոցով։ Արդեն 1791 թ. մարտի 28-ին Արղությանը Գ. Ա. Պոտյոմկինին հայտնում է «գորպկոն Մուրթուզալի խանի դապիսկով և նորա ուրախ լինիլն» (ՄՄ, ձեռ. № 2949, էջ 216 ա)։ Նույն թվականի մայիսի 8-ի նամակում Արղությանը հայտնում է. «Ապրիլի 15-էն գրած գրոյ ընկալնուլն, ընեազին ծանուցանելն անբախտութիւնն Մուրթուղազուլի խանի, Շիշկինին փոխելն ...» (նույն տեղում, էջ 226 բ)։

կարգաւորեցու պօլկովնիկ և կավալեր պարոն Ահմատովն, այս բարի... Այսօր և ևս առ մեզ շնորհակալ լինէր լինէն, որովհետև պատճառն մեք եղաք տրատաքսելոյ զՇիշկինն ի գործոյն, քանզի Վասիլ Ստեփանիչն և բոլոր կանցալարի մարզիկքն ասացեալ էին իւրն, թէ վարդապետն է պատճառն, ի նմանէ շնորհակալ լերուք»։ 1792 թ. դեկտեմբերի վերջերին Մուրթուզա Կուլի խանը Գիլանից փախչում է ռուսական նավ, որով և նրան ու նրա կողմից գերված երկու խաններին (Արաս և Ռիզա) 1793 թ. ապրիլի 30-ին տեղափոխում են Աստրախան և նշանակում ամսական 1000 ռուբլի պետական թոշակ[18]։

Աղա Մահմադ խանը միջոցներ և ուղիներ էր որոնում Ռուսաստանում գտնվող եղբորը կրկին Իրան վերադարձնելու և Իրանում իր տիրապետության համար այդ սպառնալիքը չեզոքացնելու նպատակով[19]։ Նա տարբեր միջնորդություններով փորձում է ապահովել գեթ Արաս խանի վերադարձը։ Այդ նպատակով 1795 թ. հունիսին երկու բանագնաց է առաքում Ի. Վ. Գուդովիչի մոտ, առաջարկելով վերադարձնել Արաս խանին և նրա հետ Մուրթուզա Կուլի խանի մոտ գտնվող գերիներին, խոստանալով Մուրթուզա Կուլի խանի ընտանիքի ապահովությունը և աջակցություն ռուսական վաճառականությանը ռուս-իրանական առևտրում։

Որոշակի պատասխան չստանալով ռուսական իշխանություններից, Աղա Մահմադ խանը վերջնականապես հրաման է տալիս զորքերին սկսելու ռազմական գործողությունները։ Մինչ այդ նա Այսրկովկաս արշավելու իր մտադրությունների մասին հատուկ պատվիրակությամբ տեղյակ էր պահել Թուրքիային և սուլթանից հավաստիացում ստացել նրա չեզոքության մասին։ 1795 թ. սկզբներին Մուրթուզան տեղափոխվում է Պետերբուրգ և լավ ընդունելության արժանանում ռուսական արքունիքում։ Աղա Մահմադ խանը 1795 թ. օգոստոս—սեպտեմբեր ամիսներին գրավում է Այսրկովկասի զգալի մասը, ավերում Թբիլիսին և հայածեպ վերադառնում Խորասան։

Այդ արշավանքը ավելի է նպաստում ռուսական իշխանությունների նըրկատմամբ այսրկովկասյան ժողովուրդների հակմանը։ Աղա Մահմադ խանը ևս շարունակում է այլ միջնորդություններ փնտրել Արաս խանին վերադարձնելու նպատակով։ Պահպանվել է Ղուկաս կաթողիկոսի 1795 թ. նոյեմբերի 24-ով թվագրված, Մկրտում Գալստյանին ուղղված նամակի սևագրությունը, որտեղ կաթողիկոսը հավաստում է, թե Աղա Մահմադ խանը, «որ և զայս երկիր ընդ բռամբ էած, հարկէր դրեալ մեզ՝ հոգ տանիլ վասն դարձուցանելոյ զայրն զայն (իմա՛ Արաս խանին—Պ. Չ.)։ Եւ մեք թէպէտ և գիտելով, թէ օտար է ի մէնջ այսպիսի գործ, սակայն ստիպեալ ի հարկէն զթուղթ մի գրեցաք առ սիրելին մեր՝ առաջնորդ Յովսեփ գերզգոն վարդապետն, զի թէ հնար իցէ, արձակել տացէ զայրն և թէ կարելի չիցէ, զպատասխանի իմն գրեսցէ առ մեզ»[20]։ Այնուհետև խնդրում է շուտափույթ պատասխանել իրեն, «որ ի վնասուց անկասկած մնայցեմք»[21]։ Դժվար չէ կռահել, թե ինչ պատասխան պիտի ուղարկեր Արղությանը Ղուկաս կաթողիկոսին, եթե նկատի ունենանք, որ ռուսական իշխանությունները արդեն որոշել էին Աղա Մահմադ խանին պատժելու պատրվակով արշավանք կազմա-

---

17 ՄՄ, ձեռ. № 2949, էջ 238 ա։

18 П. Бутков, Указ. соч., с. 326: Н. Дубровин, Указ. соч., с. 188--189.

19 Ըստ ռուսական կողմին Թալիշի Մուստաֆա խանի տված տեղեկության, Աղա Մահմադ խանը Արաս խանի հետ փոխանակելու համար ռուսական որևէ նավի կամ խոշոր պաշտոնյայի պատանդ վերցնելու պահանջին չենթարկվելու համար տանջանքների է ենթարկել Գիլանի որոշ բարձր պաշտոնյաների (Армяно-русские отношения в XVIII веке. 1760—1800 гг., сб. док., т. IV, под ред. М. Г. Нерсисяна. Ереван, 1990, с. 411).

20 ՄՄ, ԿԴ, 6/40, էջ ճձ—ճձա։

21 Նույն տեղում, էջ ճձա։

կերպել Այսրկովկաս։ Այդ արշավանքի կազմակերպման լուրը, բնականաբար, մեծ հույսեր է արթնացնում Արղությանի մոտ։ Նա գրավոր խորհուրդներով փորձում է ռուսական իշխանություններին համոզել, որ արշավանքը պետք է կազմակերպել ոչ միայն Վրաստանը պաշտպանելու նպատակով և զորք մտցնել Թբիլիսի, այլ Այսրկովկաս պիտի մտնել Դերբենտի և Բաքվի ուղղությամբ և գրավել նաև Շաքին, Շիրվանն ու Գանձակը, որը հնարավորություն կտա «օգնել հայոց Երևանայ և այլոց ևս գերելոցն, որք ի Պարսս են»[22]։ Արղությանի համար հստակ էր, որ ժամն է օգտագործելու Մուրթուզա Կուլի խանի թեկնածությունը և Ստեփան Դավթյանին ուղղված նույն նամակում խնդրում է նրանից, որպեսզի Մուրթուզա Կուլի խանին հայտնի, թե «վասն քոյ որքան կարելի էր աշխատեցայ և զքեզ հասուցի քոյ փափականացն, որ էր տեսութիւն թագուհւոյ, այժմ քոյ ղէրաթն՝ ինչ առնել, զի մեր հայրենիքն վասն քոյ աւերեցան»[23]։ Արղությանը կարծում էր, որ «եթե զդա (իմա՛ Մուրթուզա Կուլի խանին) դնեն ընդ Սուլորովին, իսկոյն կոտածի եղբայրն և ամենայն զորքն՝ յետ դառնալոց են և վերջացուցանելոց»[24]։ Եվ իրոք, 1796 թ. փետրվարի 19-ին Վ. Ա. Զուբովին տրված կայսերական ցուցումներում նշվում էր, որ արշավանքի ընթացքում պետք է անցնել Քուռ և Արաքս գետերը և հիմնական նպատակ դարձնել «уничтожение сил и власти Ага Махмет хана и возстановление Муртази Кули хана начально в Гильяне...»[25] Այնուհետ՝ «по возстановлению Муртазы Кули хана в Гилане возможет он устремиться в Мизандропскую провинцию...»[26]

Արշավանքի ժամանակ ռուսական զորքերը, ըստ նշված ցուցումների, պիտի գործեին Արևելյան Այսրկովկասում ու Վրաստանում և ապա միասնաբար արշավեին դեպի Պարսկաստան, իսկ Երևանի խանության հարցի լուծումը թողնվում է Հերակլ II-ին, «как для того, чтобы не ослабить сил своих и не отвлечь их от главной их цели, так и для того, чтобы приближением к пределам Порты Оттоманской рановременно не возбудить сильного в них безпокойства и тревоги»[27].

Ռուսական զորքերի հետ Այսրկովկաս է գալիս նաև Հովսեփ Արղությանը։ Նա արշավանքի իրականացման իր պլանները շարադրում է զորքերի հրամանատար Վ. Զուբովին 1796 թ. սեպտեմբերի 2-ի նամակում։ Արղությանը ընդգծում է, որ ինչպես Երևանի խանը, հայոց կաթողիկոսն ու մելիք Աբրահամը «ожидают нетерпеливо со обществом прибытия вашего сиятельства»[28] և հիշեցնում, թե «по прибытии Муртузы Кули хана в Астрабат, зделается немалое смятение в войске Ага Магомеда, так и в народе сопротивление противу его...»[29]

1796 թ. սեպտեմբերի 14-ին Մուրթուզան դեռևս չէր եկել Աստրախանից և միայն սպասվում էր նրա գալուստը։ Այդ մասին Արղությանը նշում էր Հերակլին գրած իր նամակում. «Муртуза Кули хан в скорости прибудет к нам из Астрахани, а отсюда морем отправится в Астарабат»[30]. Մուրթուզա Կուլի խանին ռուսական իշխանությունները ուղարկում են Սարի կղզի և նրան ուղեկցող նշանակում Պյոտր Կովալենսկուն, որտեղից նրանք

22 Армяно-русские отношения..., т. IV. с. 414.
23 Նույն տեղում, էջ 415։
24 Նույն տեղում։
25 Նույն տեղում, էջ 420։
26 Նույն տեղում, էջ 422։
27 Նույն տեղում, էջ 421։
28 Նույն տեղում, էջ 438։
29 Նույն տեղում, էջ 437։
30 Նույն տեղում, էջ 440։

բանակցություններ էին վարում մահմեդական ցեղերի առաջնորդների հետ՝ նրանց Աղա Մահմադ խանի դեմ ոտքի հանելու համար։ 1796 թ. նոյեմբերին անակնկալ մահանում է Եկատերինա II-ը և Պավել I-ի հրամանով դադարեցվում է ռուսական արշավանքը Այսրկովկաս, իսկ զորքերը 1797 թ. նոր են քաշվում դեպի Ռուսաստան։

Ռուսական քաղաքականության այդ անակնկալ շրջադարձը շփոթություններ է մտցնում ինչպես հայ գործիչների ծրագրերում, այնպես էլ Մուրթուզա Կուլի խանի ճակատագրում։ 1797 թ. Աղա Մահմադ խանի սպանությունից հետո Պարսկաստանում սկսվաց գահակալական կռիվներում հաղթում է Բաբա խանը և այնուհետև օծվում որպես Իրանի նոր շահ՝ Ֆաթ Ալի շահ անունով (1797—1834)։ Մուրթուզա Կուլի խանի թեկնածության հնարավորությունը այլևս վերանում է[31], իսկ նրա մոտ որպես գերի պահվող Աբաս խանին և ուղեկիցներին թույլատրվում է վերադառնալ Պարսկաստան։

Հովսեփ Արղությանը, որ մինչ այդ հարաբերություններ էր սկսել նաև Աբաս խանի հետ, ոչ միայն փորձում է առիթն օգտագործել նրան ևս դրականորեն տրամադրելու հայ ազատագրական շարժման որոշ գործիչների նկատմամբ, այլև կտրուկ շրջադարձ է կատարում և փառաբանելով Աղա Մահմադ խանին ու նրա տոհմը, աշխատում է շահել նրանց համակրանքը։ Պահպանվել է Արղությանի նամակը, որից տեղեկանում ենք, որ Աբաս խանը նամակ էր առաքել Ա. Ա. Բեզբորոդկոյին Ռուսաստան դեսպանագնացության մեկնած հայ մելիքների միջոցով՝ հավանաբար նրանց Աստրախանում գտնվելու ժամանակ։ Այդ նամակը Արղությանը ներկայացնում է Ս. Լ. Լաշկարովին և Ա. Ա. Բեզբորոդկոյին խնդրում է Պավել I-ին ծանուցել ինչպես Աբաս խանի խնդրանքի, այնպես էլ Ղուկաս կաթողիկոսի և իր միջնորդությունների մասին։ Ըստ Արղությանի Աբաս խանին գրած նամակի, կայսրը հրամայել էր. «Հրաման գրել առ տեղւոյդ պարոն գուբեռնաթ սիկօլայ Եագուլիչ Արշինոլսկուն, որ քեզ (իմա՛ Աբաս խանին—Պ. Ջ.) արձակեսցէ գնալ առ կարօտեալ ընտանիսն ... տալ քեզ ... հարիւր թուման ճանապարհի խարջի և մնացեալ օրական ռոճիկն քոյ։ ...Ի դալ շաբաթին ողորմութեամբն աստուծոյ ուրադն բարձրագոյն ուղևորեալ լինելոց է առ ձեզ և ես նորին կօպիէն առաքեցից առ քեզ»[32]։

Հովսեփ Արղությանն Աբաս խանի Պարսկաստան վերադարձի առիթն օգտագործելով նրա միջոցով մաղթանքներ ու խնդրանքներ է հղում Բաբա խանին։ 1798 թ. մարտի 12-ին Պետերբուրգից Աբաս խանին գրած ընդարձակ նամակով Արղությանը շնորհավորում է Բաբա խանին. «Զի թագաւորեսցէ ի վերա Պարսից Աթոռոյն վասն խաղաղութեան, վասն աշխարհաշինութեան և վասն գթութեան և ողորմութեան ի վերա հպատակաց իւրոց ... և զգոյթ խնամոց և ողորմութեան իւրոյ տարածեսցէ ի վերա հպատակաց իւրոց մահմետականաց և քրիստոնէից»։ Այնուհետև խնդրում է «որպես նախնի թագաւորքն պարսից ևս Աղայ Մահմատ խան թագաւորն հայրն և հօրեղբայրն իւր ողորմութեամբն իւրեանց միշտ պահպանել զսուրբ Աթոռն մեր էջմիածին. Ուչքիլիսայ կոչեցեալ և մեծ խալիֆ նորին ... առաւել ցուցանել առ նա զգոյթ և զողորմութիւն իւր և հրամայել Երևանայ խանին, որ չզրկեն զՈւչքիլիսէն և կամ յափշտակէն զմուլք նորա, զի նախնի թագաւորքն մաղաֆ են արարեալ զգիւղօրայս Ուչքիլիսէի ...»։ Հաջորդ կետով խնդրում է «զգոյթ ողորմութեան իւրոյ տարածանել առ ողորմելի ազգս մեր, որք են ենթ խնամոց և հովանաւորութեան իւրոյ մեծութեանն, որ նոքա վայելելով զայն՝ փախուցեալքն ի բռնութենէ խիստ տեարցն յետս դարձցին

31 Մուրթուզա Կուլի խանը վերջին անգամ Աստրախան է գալիս 1797 թ. հունիսին և նամակով դիմում Հ. Լազարյանին։ Մահանում է Աստրախանում 1800 թ. հոկտեմբերին Պարսկաստան վերադառնալու թույլտվություն ստանալուց մի քանի ամիս անց։ Տե՛ս Վ. Դիլոյան. նշվ. աշխ., էջ 179։

32 ՄՄ, ձեռ. № 2951, էջ 161 բ—162 ա։

ի ճայրենի աշխարհն իւրեանց»: Հինգերորդ խնդրանքը վերաբերում է Արցախի խնդրին. Արղությանը պահանջում է Ղարաբաղի Իբրահիմ խանին «բառնալ ի Շուշու բերթէն և կործանել զնա» քանզի նա էր Աղա Մահմադ Շահի սպանման պատճառը և «կործանիչ իմոյ ազգին և ջնջիչ յերկրէ անտի»:

Այնուհետև Արղությանն իր ծառայությունն է խոստանում պարսկառուսական բանակցություններում և փոխարենը պահանջում է Թիֆլիսից տարված գերիներին ազատություն շնորհել և «դարձուցանել զնոսա յերկիրն իւրեանց»:

Վերջին ութերորդ կետով Հ. Արղությանը խնդրում է Աբաս խանից, որ «զոր ինչ պարոն Մէլիք Ջիմշիտին ասացեալ էիր և կամ գրով նշանեալ, այն կատարումն ետ»:

1798 թ. մարտի 22-ին Հովսեփ Արղությանի Մկրտում Գալստյանին գրած նամակից տեղեկանում ենք նաև, որ այդ նամակը Աբաս խանին պիտի հանձնվեր Աստրախանում Մկրտում Գալստյանի միջոցով, որից և խնդրվում էր Աբաս խանին «լաւ հասկացնել Սերգե Լազարիչին (Լաշկարով) խոստացեալ հարիւր թումանն. ընդ շնորհակալութեան թղթոցն ասասցես փութով առաքել ձեռամբ քով, որ դու աստ գրեսցես ումեք հասուցանել նմա, իւր ճանապարհորդական խարջի հարիւր թումանն շնորհեալ նորին մեծութիւնն, հետևողութեամբ մերով, որ յիւր քսակէն ոչ ինչ չելանէ»[33]:

Նույն թվականի մայիսի 13-ին Աբաս խանին Արղությանի գրած նամակի համառոտագրությունից պարզվում է, որ Աբաս խանի նամակը ստացվել է Պետերբուրգում և ուղարկվել է կայսեր «ուրազն, որ առ նոր գուբեռնաթն Հաշտարխանու, սակս գնալոյն իւրոյ ի հայրենիսն մեծաւ պատուով, որոց և զօրինակն ընդ դրոյս առաքիլն մեր առ ինքն»[34]: Այս նամակում Առղությանը կրկին խնդրում է «եթէ մէլիք Ջիմշիտին բան ինչ անկանիցի նմա, ոչ անտես առնել զնա, որպէս փոխանակ սիրոյ նոցա զոր սիրեն զնա: Նոյնպէս յանձնարարութիւն վասն ազգին և սրբոյ Աթոռոյն, որպէս գրեալ եմք քանիցս իւրն»[35]:

Աբաս խանը շուտով վերադառնում է Իրան: Հայրենիք վերադառնալու թույլտվություն է ստացվում նաև մելիք Ջիմշիտի և մելիք Ֆրիդոնի համար, որոնց հետ Այսրկովկաս է ուղարկվում նաև Պյոտր Կովալենսկին: Վերջինս, Վրաստան մեկնելու ճանապարհին, 1799 թ. օգոստոսի 17-ին արքունիք ուղարկված իր զեկուցագրում հաղորդում է. «Армянский мелик Джимшит Шахназаров, находящийся здесь для окончания собственных своих дел и в скорости отправляющейся в Моздок для совокупнаго со мною переезда в Грузию, представил ко мне полученное им от Бабахана письмо в сопровождении таковаго же от некоего Абазхана, содержащегося здесь в плену и по высочайшему соизволению отпущеннаго в свое отечество. Письмы сии по недостатку здесь надежных персидскаго языка переводчиков не могли быть переведены в точности, по содержанию оных, заключаются оне в том, что Баба хан похваляя прежния его, мелика, верность и усердие на службе Аги Магомед хану приглашает его возвратиться паки в Персию со обнадеживанием содержать его в особенном уважении и милостях своих. Я, препровождая при сем означенныя письмы в орегинале, приобщая тут же и порученный мне от помянутаго мелика на всевысочайшее имя всеподданейший его по поводу сих писем отзыв, с коего следует у сего для сведения Вашего сиятельства список, долгом моим имею честь донести, что сем случае Мелик Джимшид не оставил возобновить предо мною изустно священный свой обет пребывать всегда верным и усердным к службе е. и. в.

---

33 Նույն տեղում, էջ 163 բ։

34 Նույն տեղում, էջ 177 ա։

35 Նույն տեղում։

без малейшаго когда-либо от подобных предложений твердости своей колебания»[36].

Մելիք Ջիմշիտին առաքված Իրանի նոր շահի այդ հրավերը պատահական չէր։ Նա փորձում էր բոլոր միջոցներով այսրկովկասյան ժողովուրդների առաջնորդներին համոզել կապերը խզելու Ռուսաստանից և կրկին ընդունելու Իրանի հպատակություն։ Ֆաթ Ալի շահը վրաց Գեորգի XII-ից ևս պահանջում էր ենթարկվել Իրանին և պատանդներ ուղարկել, խոստանալով նրան հանձնել Երևանի, Գանձակի, Շաքիի ու Շիրվանի կառավարումը, իսկ հակառակ դեպքում սպառնում էր արշավել և ավերել Վրաստանը։ Իր հերթին Հովսեփ Արղությանը, «գևորված Ռուսաստանի մտադրություններից լրջությունից և հաղորդելով Պավել I-ի առաջարկությունը Գեորգի XII-ին, «որ եթէ կամին մտանել ենթ հովանաւորութեան իւրոյ, յայնժամ ցուցցէ զիւր ողորմութիւնն մեծ», շտապեցնում էր նկատի ունենալ Իրանի սպառնալիքը և ուստափուլթ դեսպանություն առաքել Ռուսասան՝ ռուսական օգնությունը ստանալու նպատակով. «որ ահա ունի պատրաստեալ ... թագ, ծիրանի, թուր, կաւալեր, ասաղ և այլն ամենայն իւրն և ժառանգին, ևս եղբարցն, զորմն ևս պատրաստ է»[37]։

XVIII դարի 90-ական թթ. վերջին սաեղծվեցին միջազգային քաղաքական նպաստավոր հանգամանքներ Այսրկովկասի միացումը Ռուսաստանին իրականացնելու համար։ Խոսքն առաջին հերթին վերաբերում է Ֆրանսիայի եգիպտական արշավանքին, որից անմիջապես օգտվեց Ռուսաստանը։ Այն սրեց ֆրանս-թուրքական հարաբերությունները և բերեց ռուս-թուրքական մերձեցման և դաշինքի (1799 թ.)[38], որով Թուրքիայի կողմից այսրկովկասյան գործերին միջամտելու կաշկանդվածությունը ապահովագրված համարելով՝ Ռուսաստանը ձեռնամուխ եղավ Այսրկովկասի նվաճմանը։ Իրանում Ֆաթ Ալի շահի դիրքերը դեռևս լիովին չէին ամրապնդվել և նա ևս, ռուսական արքունիքի կարծիքով, ի վիճակի չէր կարող լինել լուրջ դիմադրություն կազմակերպելու։ Ռուսասանում, ի վերջո, սաացվում է Գեորգի XII-ի խնդրագիրը, որտեղ հանձնարարություն էր հայտնվում Ռուսաստանի դերիշխանությունը 16 կետից բաղկացած պայմաններով ընդունելու մասին։ Ռուսական զորքերը գեներալ Լազարևի հրամանատարությամբ 1799 թ. նոյեմբերին մտնում են Վրաստան և 1800 թ. Գեորգի XII-ի երկարատև հիվանդության ժամանակ՝ մասամբ, իսկ նույն թվականի դեկտեմբերի 28-ին նրա մահից հետո՝ ամբողջությամբ, փաստական կառավարման դեկը երկրում վերցնում իրենց ձեռքը։

ИЗ ИСТОРИИ АРМЯНО-РУССКО-ИРАНСКИХ СВЯЗЕЙ
(Конец XVIII в.)

П. А. ЧОБАНЯН

Резюме

Деятели армянской освободительной борьбы конца XVIII века сотрудничали с претендентами на шахский престол и феодальной верхушкой Ирана, надеясь использовать их прорусски настроенную часть в разрешении вопроса освобождения Армении от иранского господства. В свою очередь представители иранской стороны часто пользовались посредничеством армянских деятелей в налаживании связей с русскими властями.

---

36 АВПР, ф. СРП, оп. 77/6, 1796—1800, д. № 473, л. 306.

37 *ՄՄ, ձեռ. № 2951, թ. 214—215։*

38 История дипломатии, Т. I, М., 1959, с. 458.